

# Հիդրոէլեկտրակայաններ (ՀԷԿ)



Հիդրոէլեկտրակայանները կառույցների համակարգեր են, որոնք ջրի հոսքի էներգիան փոխակերպում են քիմիական էներգիայի:

## ՓՈՔՐ ՀԷԿ-ԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Փոքր հիդրոէլեկտրակայանների վնասակար ազդեցությունը կանխելու նպատակով նախատեսվել են մի քանի չափորոշիչներ.

- ✚ Այն ձկնատեսակների և ջրային բույսերի առկայություն, որոնք գրանցված են կարմիր գրքում կամ բնորոշ են տվյալ տեղանքին (էնդեմիկ)
- ✚ Հայաստանի Հանրապետության տարածքին բնորոշ ձկնատեսակների ձվադրավայրերի առկայություն
- ✚ դերիվացիոն խողովակներով 40% և ավելի զետի ծանրաբեռնվածության առկայություն
- ✚ ջրակոհհամակարգերի սանիտարական պահպանման գոտիների առկայություն
- ✚ այն տարածքների առկայությունը, որոնց բնորոշ են սողանքները
- ✚ այն ճանապարհների առկայությունը, որոնք մոտենում են փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարական տարածքին

**<<ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՏԻՆԵՐԸ և ԳԵՏԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>**

Հիդրոէլեկտրակայանները էկոլոգիապես մաքուր են, սակայն նրանց կառուցման և շահագործման ընթացքում առաջացել են մի շարք էկոլոգիական և սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնց պատճառով ոլորտը դարձել է բարձր ռիսկային և անհապաղ լուծում է պահանջում:

Փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը լուրջ վնասներ է հասցնում բնությանը, իսկ նրանց զարգացման հետ մեկտեղ կենսաբազմազանության կորուստ է նկատվում, վտանգվում են կարմիր գրքում գրանցված կենդանական և բուսական տեսակները, գետերը ծանրաբեռնվում են դերիվացիոն խողովակներով և հայտնվում ճգնաժամային վիճակում:



Անհրաժեշտ է սահմանել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գոտիները և գետերի ցանկը, Ստեղծված բնապահպանական խնդիրները լուծելու, ջրօգտագործման ժամանակ ջրաէկոհամակարգի պահպանությունը և հավասարակշռությունը ապահովելու համար: դրանք նաև կկանխեն փոքր ՀԷԿ-երի վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

**Առաջարկվող կարգավորման բնույթը.**

ՀՀ կառավարության որոշմամբ նշվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գոտիների և գետերի ցանքը:

Հաշվի առնելով գյուղատնտեսական, բնապահպանական և այլ առանձնահատկություններ աղյուսակում ներկայացված է Սևանա լճի ջրհավաք ավազանի ձկնատեսակների բնական ձվադրավայր հանդիսացող այն գետերի ցանկը, որտեղ առաջարկվում է կառուցել փոքր հիդրոէլեկտրակայաններ:

<i>Ձկնատեսակ</i>	<i>Ձվադրավայր հանդիսացող գետեր</i>
Կողակ	Մասրիկ, Արգիճի, Վարդենիս
Բեղաձուկ/բեղլու	Մասրիկ, Արգիճի, Վարդենիս
Գեղարքունի	Մասրիկ, Լիճք, կարճաղբյուր, Գավառագետ
Ամառային իշխան	Լիճք, Կարճաղբյուր

Ուսումնասիրվել են Հայաստանի այն տարածքները, որտեղ Հէկ-երի կառուցումը ձեռնտու չէ: Համադրվել են 2009թ-ի հունվարի 22-ի ՀՀ կառավարության նիստի N3 արձանագրային որոշման ընդունումից հետո, փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման նպատակով տրված ջրօգտագործման թույլտվությունների համապատասխան գետային ավազանների ջրերի օգտագործված ու օգտագործվելիք հաշվարկային ելքերը, վերոհիշյալ արձանագրային որոշմամբ հաստատված փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմայով ներկայացված հաշվարկային ելքերի հետ: Համադրման արդյունքում արձանագրային որոշմամբ հաստատված փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմայով հաստատված հաշվարկային ելքերը ավելի քիչ են քան Սևանա լճի, Ախուրյան, Ձորագետ, Դեբեդ, Ագատ, Արփա, Որոտան գետավազաններում, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի հաշվարկային ելքերը:

Վարարակն/Գորիս/ և Մարմարիկ գետավազաններում տվել են ջրօգտագործման համար թույլատվություններ, որը չկար ՀԷԿ-երի զարգացման սխեմայի մեջ:



# ՉԿՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԷԿ-ԵՐԸ ԽՈՉԸՆԴՈՏ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ



Սևանա լճի ձկնատեսակների շատացմանը առաջ նպաստում էր Կարճաղբյուր գետը, այն համարվում էր էնդեմիկ ձկնատեսակների ձվադրման վայր, իսկ 2009թ-ի տվյալներով այն միայն հանդիսանում էր որպես ռոռզման աղբյուր:

Սևանի ավազան լցվող այն գետերը, որոնց ակունքները իշխանի ձվադրման տեղեր էին, նրանց վրա նույնպես նախատեսվում էր կառուցվել ՀԷԿ-եր:

Սևանին հարակից Կարճաղբյուր գյուղի միջով անցնում է կարճաղբյուր գետը, որը ժամանակին հանդիսանում էր մի քանի ձկնատեսակների համար ձվադրման վայր և մեծ դեր ուներ ձկնորսների համար, իսկ իշխանի վերացումից հետո միայն ռոռզում է գյուղի դաշտերը: Խորհրդային տարիներին գյուղը հայտնի էր ձկնաբուծական գործարանով:

Գործարանը վաղուց դադարել է գործել, իսկ ձկնատեսակների կտրուկ նվազման համար շատերը մեղադրում են հենց ձկնորսներին:

Այս գետը հնարավորություն է տալիս մարդկանց զբաղվել գյուղատնտեսությամբ: Գետի ջուրը օգտագործում են կենցաղում և ռոռզման համար:

Գյուղում կան ոչ մեծ տնտեսություններ, որոնք օգտվելով գետի ջրից ստեղծել են արհեստական փոքր ջրավազաններ և իրականացնում են ձկնաբուծություն:

ՀԷԿ-ը սկսվեց կառուցվել, երբ Հայաստանում տիրում էր էլեկտրաէներգիայի ճգնաժամ: Էկոլոգների կարծիքով ՀԷԿ-երի կառուցումը բարերար ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա:

Քանի որ այն ժամանակ Սևանա լիճը առատ էր Միգ ձկնատեսակով և ձվադրում էր լճի պայմաններում, իսկ Իշխանը վերացել էր և բազմացնելու խնդիր չկար, այդ իսկ պատճառով ձկների վերարտադրման խնդիր ևս չկար:

Սակայն այսօր, երբ ՀՀ-ում չկա էլեկտրաէներգիայի պակաս և փոխարենը ձկնատեսակների բարելավման ծրագրեր են իրականացվում, ՀԷԿ-երը վնասակար ազդեցություն են թողնում ձկների բազմացման վրա:

Կարճաղբյուրի գյուղապետարանը համաձայնություն է տվել ևս մեկ ՀԷԿ-ի կառուցմանը կարճաղբյուր գետի վրա: Գյուղապետի խոսքով ռոռզման ամիսներին դադարեցվելու է

Հէկ-ի աշխատանքը, որպէսզի գյուղացիները ոռոգում կատարելու հնարավորություն ունենան:

Կան շատ համայնքներ, որտեղ Հէկ-երը մեծ լարվածության առիթ են դառնում, թողնելով գյուղացիներին առանց ոռոգման և խմելու ջրի, ինչն էլ գյուղմթերքների արտադրման և բնակչության եկամտի նվազման պատճառ է դառնում:

Արագածոտնի մարզի մի քանի գյուղերի գյուղացիներ համոզված էին, որ Հէկ-ի կառուցումից հետո ջուր չեն ունենալու, որպէսզի ոռոգեն իրենց այգիները, գյուղացիների մտավախությունն այն է, որ Հէկ-երի պատճառով կչորանան այգիները և բացասական ազդեցություն կթողնեն բնության վրա:

2013թ-ին Ուջան գյուղում նույնպես գյուղացիները դեմ էին Հէկ-երի կառուցմանը, և իրենց բողոքը արտահայտում էին ճանապարհները փակելու միջոցով:

Լոռու մարզի Մարց գյուղի բնակիչները ոռոգում իրականացնում էին Մարցիգետ գետի ջրով: Մարցի գյուղապետի խոսքով 1996-2005թթ գյուղի բնությունը շատ ավելի լավն էր, գեղատեսիլ քան օրինակ Սևանինը, իսկ Հէկ-երի կառուցումից հետո բնությունը կչորանա, գյուղացիների հողատարածքները նույնպես և նրանք կզրկվեն ապրուստի միջոցից: 2014թ-ի տվյալներով Մարցիգետի վրա գործում էր Մարցիգետ-2 փոքր Հէկ-ը:

Վայոց ձորի մարզի Հերմոն գյուղի բնակիչը խոսում էր փոքր Հէկ-երի մասին ասելով, որ ամռան ընթացքում այն խանգարում է ոռոգմանը և հետևաբար, եթե չվոռոգեն դաշտերը ապա գյուղատնտեսական ապրանք չեն ունենա: Գետի սանիտարական վիճակը նույնպես լավ չէ, քանի որ ջուրը գետից պակասել է:

Սյունիքի մարզի սահմանամերձ Ծավ գյուղի բնակիչները իրենց եկամուտը ստանում են անասնապահության և հողագործության շնորհիվ: Գյուղացիների համար որպես ոռոգման աղբյուր հանդիսանում է Ծավ գետը, որի վրա կառուցվել է փոքր հիդրոէլեկտրակայան: Գյուղացիների խոսքով այն նրանց վնաս չի պատճառում և ոչ էլ օգուտ է բերում: Ամռան ամիսներին, երբ գյուղացիները ոռոգում են իրականացնում, Հէկ-ը անջատում են, որպեսզի ոռոգման գործընթացին չխոչընդոտի:


Ծավի գյուղապետի խոսքով փոքր հիդրոէլեկտրակայանը չի առաջացնում որևէ բնապահպանական խնդիր: Ձկնուղին նորմալ աշխատում է, գետում էլ ջուր կա:

Մեղրու բնակիչների խոսքով փոքր հիդրոէլեկտրակայանների գործունեության արդյունքում վերանում են մեղուները: Մեղրի գետի վրա նախատեսվում էր կառուցել 9 փոքր հիդրոէլեկտրակայաններ: Մեղուն չի կարող աշխատել, այնտեղ, որտեղ բարձրավոլտ հոսանքներ են գնում և հետևաբար մեղվաբուծությունը չի զարգանա: Մեղրին հայտնի է իր մեղուներով, որոնք իրականացնում են փոշոտում ապահովելով բուսականության առատությունը

## <<Եղեգնաձոր>>, <<Եղեգնաձոր ՓՀԷԿ-1>>

### Փոքր ՀԷԿ-եր.

#### Մոնիտորինգի արդյունքներ



<<Եղեգնաձոր>> և <<Եղեգնաձոր ՓՀԷԿ-1>> փոքր ՀԷԿ-երը գտնվում են Վայոց ձորի մարզի Գլաձոր և Գետափ գյուղերի տարածքներում: Փոքր ՀԷԿ-երը գտնվում են Եղեգիս գետի վրա: Այդ երկու փոքր հիդրոէլեկտրակայանները ջրառն իրականացնում են 2 խողովակներով: Պատվարի ձախ մասում կա 1.5մ լայնություն և 7մ երկարություն ունեցող ձկնուղի, որով դիտարկման ժամանակ ընդհանրապես ջուր չէր անցնում: Ձկնուղին ունի 5 վանդակ, յուրաքանչյուրն էլ ունի մոտ 1.2 մ երկարություն: Տեղադրված է աղբորսիչ, որի ճեղքերն ունեն 2-3 սմ լայնություն:

Կախված ջրօգտագործման թույլտվությունից՝ <<Եղեգնաձոր>> փոքր ՀԷԿ-ը ջրառ կատարում է 10 ամիս, չի իրականացնում միայն հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին, 12 ամիս նրա գործունեության ընթացքում թողնում է 0.870 խմ/վ բնապահպանական թողք, սակայն դիտարկման պահին բնապահպանական թողք բաց չէր թողնվում գետ:

Չէր իրականացվում ջրառի ավտոմատ կառավարում և հաշվառում: Չէր կատարվում նաև ազատ ջրօգտագործման պահանջը:



Ահագանգ էր ստացվել Եղեգիս գյուղի բնակիչներից: Նրանք ասում էին, որ Եղեգիս գետի վրա նախատեսվում էր կառուցել ՀԷԿ և անգամ չէին իմանում թե ումն է այդ ՀԷԿ-ը:

Երբ լրագրողները այցելեցին գյուղ, գետի հունը փոխված էր, լանդշաֆտը քանդված:

Կառավարությունը արգելում էր գործունեություն ծավալել հոսքի ձևավորման տարածքներում:



Հոսքի ձևավորման տարածքների սահմանման չափորոշիչներն են՝

- Հոսքի ձևավորման տարածքներն ամբողջությամբ ընդգրկում են գետի ակունքը, ստորերկյա բնադեղնուրների և ջրադեղնուրների ակունքները, նաև մերձակա այն տարածքները, որոնք իրենց բնական վիճակով, որպես գործող և առողջ էկոհամակարգեր ենթակա են պահպանման:
- 4000մ շառավղով են սահմանվում հոսքի ձևավորման տարածքները:

## ՓՇԷԿ-ԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

### Էկոլոգիական թողք



Բնապահպանական թողքի արժեքի հաշվման համար հիմք է ծառայում տարվա սեզոնային ժամանակաշրջանում առավել նվազագույն էլքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին էլքը: Եթե գետը չորացել է և 10 օրվա ընթացքում ջրհոսք չի նկատվում, ապա դա ընդունվում է որպես էկոլոգիական թողք: Ըստ Հանրապետության ջրային օրենսգրքի՝ Էկոլոգիական թողքը ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական ինքնավերականգնումը և հավասարակշռությունը:

Փոքր ՀԷԿ-երի կառուցման ուսումնասիրությունների ժամանակ պարզ դարձավ, որ <<Դարանակ>> ՓՇԷԿ-ի կառուցման դեպքում էկոլոգիական թողքը ավելի քիչ կլինի: <<Ձախակողմյա և Դարանակ գետերի էկոլոգիական հավասարակշռության կարևոր սանիտարական էլքերն են, 0.004մ<sup>3</sup> /վրկ և 0.008մ<sup>3</sup> /վրկ չափով>>:

Երբ գետերի 90%-ից ավելին վերցնում են խողովակների մեջ, ջրային ռեսուրսները պակասում են, նրանց էկոլոգիական հավասարակշռությունը չի պահպանվում և նկատվում է կենսաբազմազանության կորուստ: Քանի որ ՓՇԷԿ-ի շահագործման ընթացքում նախագծային պայմանները չեն պահպանվում, ջրային ռեժիմը խախտվում է նույնիսկ այն ժամանակ, երբ նախագծով նախատեսված էկոլոգիական թողքը բավարար է:

Ըստ ՀՀ ջրային օրենսգրքի 98 հոդվածի և 99 հոդվածի 5րդ կետի լանդշաֆտներն ու էկոհամակարգերը ջրային ռեսուրսների օգտագործման դեպքում, պետք է պահպանվի և ապահովվի էկոհամակարգի հավասարակշռությունը: Իսկ ըստ 99 հոդվածի 6-րդ կետի պահանջվում է ջրային ռեսուրսը պահպանել հյուծումից:

## Սողանք

Փոքր ՀԷԿ-երի կառուցման համար առաջին հերթին պետք է ուշադրություն դարձվի հողի փխրունության և սողանքային գործընթացների վրա, հակառակ դեպքում շինարարական աշխատանքներից, պայթյուններից սողանքային գործընթացները ակտիվանում են: 2013թ-ի տվյալներով հողը մոտ 200մ անցել և լցվել է Եղեգիս գետը:



Պարզ է դարձել, որ Շատին գյուղի տներից մեկին կից հողամասից սահքը կազմել է 400մ<sup>3</sup>, որի հետևանքով ընկուզենին անցել է գետի տակ:

## ՓՀԷԿ-երի ազդեցությունը համայնքների սոցիալական վիճակի վրա

Արդեն նշվել է, որ ՀԷԿ-երը մեծ լարվածություն են առաջացնում համայնքներում թողնելով գյուղացիներին առանց ոռոգման և խմելու ջրի, ինչը ազդում է գյուղմթերքների արտադրության և գյուղացու եկամտի վրա: Դրանից զատ վատանում է համայնքի սանիտարական վիճակը, առաջացնում է աղմուկ, բնակիչները զրկվում են հանգստի գոտիներից և կյանքի որակը վատանում է: Դրա դիմաց բնակիչները ոչ մի շահ չունեն ու դա որևէ ձևով չի փոխհատուցվում: Այս դիտարկումները հիմնավորելու նպատակով 12 համայնքներում անցկացվել է հարցում:

### Վերին Գետաշեն, ներքին Գետաշեն, Մադինա համայնքներ

#### <<Արգիճի>> ՓՀԷԿ



Այս համայնքներում հարցման արդյունքում 16 բնակիչներ ասացին, որ ՀԷԿ-ի կառուցումից հետո նրանց կյանքի որակը չի լավացել, 6-ը նշեցին, որ ոչ միայն կյանքի որակը չի լավացել այլև վատացել է: 14 հոգի պատասխանեցին, որ ՀԷԿ-ը նպաստել է գետում ձկան պաշարների նվազմանը: 10 հոգի հավելեցին, որ Արգիճի գետի

սանհիտարական վիճակը վատանում է: 13 հոգու խոսքով ՀԷԿ-ը բացասական ազդեցություն է թողնում նրանց ջրամատակարարման վրա: Այն հարցին, թե ի՞նչ խոստումներ են տվել ՓՀԷԿ կառուցողները, բնակիչներից 13-ը պատասխանեցին, որ ոչ մի խոստում չի տրվել, իսկ 3 հոգի ասացին, որ խոստացել են ճանապարհները բարեկարգել և չեն արել: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ՓՀԷԿ-ին դեմ էին 9 հոգի, կողմ՝ 2 և 5 հոգի հրաժարվեցին պատասխանել:

## Մարց գյուղ

### <<Մարցիգետ-1>> ՓՀԷԿ

Մարց գյուղում 15 հոգի հարցվածներից ՓՀԷԿ-ին դեմ էին 8 բնակիչներ:

ՓՀԷԿ-ի կառուցմանը կողմ էին 2 հոգի ովքեր հետագայում պետք է աշխատանքի անցնեին այնտեղ: 5 հոգի չպատասխանեցին այդ հարցին:

Այն հարցին, թե ի՞նչ ազդեցություն կթողնի ՀԷԿ-ը ապրելակերպի վրա, 15 հոգուց 13-ը պատասխանեցին, որ կթողնի բացասական ազդեցություն և կյանքի որակը կվատանա:

Գյուղացիները նաև հավելեցին, որ ՀԷԿ-երի կառուցումից հետո նրանք անգամ կարգին լույս չեն ունենում, պարբերաբար անջատվում է:

Այն հարցին, թե մասնակցե՞լ են հասարակական լուսններին, հարցվածներից 6-ը պատասխանեցին, որ մասնակցել են, սակայն իրենց կարծիքը հաշվի չի առնվել:



## Քաղաք Իջևան

### <<Իջևան-1>> ՓՀԷԿ



Իջևանում ՀԷԿ-ի կառուցմանը հարցված 7 հոգուց 5-ը դեմ էին, 2-ը կողմ: 4 հոգու կարծիքով կվատա ջրամատակարարումը, ձկնատեսակների վերաբերյալ նշեցին, որ ձկան պաշարները գնալով նվազում են, իսկ 3 հոգի այդպիսի խնդիրների մասին չխոսեցին: Բնակիչներից 5-ը համոզված

Էին, որ ՀԷԿ-ի կառուցումից հետո իրենց կյանքի որակը կվատանա, 2 հոգի կարծում էին՝ կլավանա, 4-ը ասացին, որ գետի սանիտարական վիճակը կվատանա:

### **Վահագնաձոր համայնք**

#### **<<Վահագնի>> ՓՀԷԿ**

Համայնքում 6 հարցվածներից միայն 1 հոգին էր դեմ ՓՀԷԿ-ին, որի տունը գտնվում էր անմիջապես ՀԷԿ-ի կողքին, նա նշեց, որ ՀԷԿ-ի աղմուկը խանգարում է իրեն և իր ընտանիքին: 5 հոգին պատասխանեցին, որ ՀԷԿ-ը իրենց ոչ մի վնաս չի տալիս, ազդեցություն չունի ջրամատակարարման վրա, նաև բնակիչներին ապահովում է աշխատանքով:



Համայնքում իրականացված ՓՀԷԿ-ի մասին հասարակական լսումներին մասնակցել են 2 հոգի, իսկ 4-ը նշեցին, որ տեղյակ չեն եղել: Ինչ վերաբերում է հարցերին՝ կապված գետի սանիտարական վիճակի փոփոխման, ձկան պաշարների նվազման, արտագաղթի ավելացման հետ, ապա 2 հոգի կարծում էին, որ գետի վիճակը կվատանա, 2-ը՝ կլավանա՝ հաշվի առնելով ընկերության խոստումները՝ կապված ջրատարի մաքրման հետ, 2-ը դժվարացան պատասխանել: ՓՀԷԿ-ի կառուցումից հետո կյանքի որակի փոփոխմանը վերաբերող հարցին՝ 4 հոգի պատասխանեցին, որ ՀԷԿ-ի կառուցումից հետո նրանց կյանքի որակը չի փոխվել, իսկ 2 հոգի ասացին, որ լավացել է, բայց չնշեցին թե ինչով:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ համայնքում չկան այգիներ և մշակովի տարածքներ, այդ իսկ պատճառով մարդիկ գետի ջուրը չեն օգտագործում ոչ խմելու համար, ոչ էլ որպես ոռոգման աղբյուր:

### **Գետահովիտ համայնք**

#### **<<Խաչաղբյուր-2>> ՓՀԷԿ**

Համայնքում հարցում կատարվեց 10 բնակիչներից, որոնք բոլորն էլ կողմ էին ՓՀԷԿ-ի կառուցմանը: Նրանք վստահ չէին, որ ՀԷԿ-ը բացասական ազդեցություն կունենա իրենց ջրամատակարարման վրա: 6 հոգի կարծում էին, որ չի ազդի, 3 հոգու կարծիքով հնարավոր է, որ ազդի: 8 հոգի ասացին, որ ոռոգման ամիսներին, եթե ՀԷԿ-ը անջատվի այդ դեպքում ոչ մի վնաս չի տա գյուղատնտեսական արտադրանքին: Հարցին թե



նկատե՞լ են ձկան պաշարների նվազում, 6 հոգի պատասխանեցին, որ չեն նկատել, իսկ 2 հոգի նշեցին, որ գետում արդեն ձուկ չկա:



Ընկերությունը համայնքի բնակիչներին խոսք է տվել օգնություն ցուցաբերել, ապահովել աշխատանքով, լուսավորության հարց լուծել: Հարցված գյուղացիներից 5-ի կարծիքով կյանքի որակը կլավանա այն դեպքում, եթե իրենք խղճով աշխատեն, 2 հոգի ասացին որ իրենց ապրելակերպը կմնա նույնը, 3-ը դժվարացան

պատասխանել: Հարցին թե արդյո՞ք ՀԷԿ-ի կառուցումը կարող է դառնալ արտագաղթի պատճառ, 4 հոգի պատասխանեցին, որ եթե մարդիկ այստեղ ունենան աշխատանք չեն գնա, 2-ը նշեցին, որ ժամանակի հետ ամեն ինչ պարզ կդառնա, 4-ը դժվարացան պատասխանել: 2013թ-ի հասարակական լուսմների ժամանակ Գետահովիտ համայնքի 2000 բնակիչներից ավելի քան 50%-ը դեմ արտահայտվեց ՓՀԷԿ-ի կառուցմանը:

## **Կոշ համայնք**

### **<<Կոշ ՓՀԷԿ>>**

Հարցված 12 հոգուց կողմ էին 8 հոգի, իսկ մնացած 4-ը լուսմներից և ՓՀԷԿ-ից տեղյակ չէին: Գյուղացիները դժվարացան գնահատել ՓՀԷԿ-ի ազդեցությունը գյուղմթերքի, ձկան պաշարների, ջրամատակարարման վրա: 1-2 հոգի կարծում էին, որ ՓՀԷԿ-ի կառուցումից հետո կնվազեն ջրի և ձկան պաշարները, իսկ բնակիչների մյուս կեսը այդ հարցին չպատասխանեցին: Հարցին, թե արդյո՞ք կփոխվի նրանց կյանքի որակը ՓՀԷԿ-ի կառուցումից հետո, հարցվածներից 5-ը նշեցին, որ կլավանա, եթե իրենց խոստումները պահեն՝ սեզոնին ոռոգման ջուր թողնեն և ջրանցքն էլ միշտ մաքրեն:

## **Քաղաք Ջերմուկ**

### **<<Արփա-3>>**

Լուսմներին ներկա էր տեղի բնակիչներից ընդհամենը 1-ը, իսկ մնացածը Վանաձորի և Երևանի քաղաքացիներ էին: Հարցվածներից 5-ը տեղյակ չէին լուսմների մասին: Չնայած նրան, որ 4 հոգու կարծիքով ՓՀԷԿ-ը բացասական ազդեցություն կունենա ջրամատակարարման վրա, կնվազեն ձկնային պաշարները, այդուհանդերձ նրանք



նշում են, որ կյանքի որակը չի փոխվի: 6 հարցվածներից ՓՀԵԿ-ի կառուցմանը դեմ էր միայն 1-ը, կողմ արտահայտվեցին 3 հոգի, իսկ մնացած 2-ի համար միևնույնն էր:

### Դարանակ համայնք

#### <<Դարանակ >> ՓՀԵԿ



Այս համայնքում 15 հարցվածներից ՓՀԵԿ-ի կառուցմանը 5 հոգի կողմ էին, 10-ը՝ դեմ: 7 հոգին համոզված էին, որ ՓՀԵԿ-ի շահագործումը կազդի իրենց ջրամատակարարման վրա և իրենք ոռոգման ջրի խնդիր կունենան: 5 հոգին կարծում էին, որ ՓՀԵԿ-ի կառուցումը բացասական ազդեցություն կունենա, 3 հոգի նշեցին, որ խնդիր չի առաջանա, եթե ՓՀԵԿ-ը նորմալ աշխատեցնեն: Հարցվածներից գրեթե բոլորի կարծիքով բացասաբար կազդի ջրի որակի վրա: Նրանք նշեցին, որ կառուցումը նաև կվնասի բերքը, իսկ 10 հոգի համոզված էին, որ ՓՀԵԿ-ի կառուցումից հետո լուրջ խնդիրների առաջ են կանգնելու: Այն հարցին, թե արդյոք կնկատվի ձկան պաշարների նվազում, 6-ը պատասխանեցին, որ արդեն իսկ գետում ձուկ չկա, 4-ը համոզված էին, որ կնվազի, 5-ը դժվարացան պատասխանել: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ 8 հոգու խոստացել էին աշխատանքի տեղավորել, 3-ը չգիտեին թե ով է կառուցողը: Հարցվածներից միայն 2 հոգի կարծում էին, թե ՓՀԵԿ-ը վնաս չի տա և իրենց ապրելակերպը կգնա դեպի լավը: Այնինչ 10 հոգի համոզված էին, որ ՓՀԵԿ-ը կդառնա արտագաղթի պատճառ:

## Օհանավան համայնք

### <<Շամիրամ-1>> ՓՀԷԿ



Համայնքի 20 հարցվածներից միայն մեկն էր կողմ ՓՀԷԿ-ի կառուցմանը՝ Արագածոտնի մարզպետը: 19 հոգի դեմ էին, նրանք համոզված էին, որ ջուր չեն ունենալու հողագործության համար, այգիները կչորանան և իրենք կգրկվեն եկամտի աղբյուրից: Հարցին, թե արդյո՞ք ՓՀԷԿ-ը կարող է արտագաղթի պատճառ դառնալ, 19-ն էլ պատասխանեցին, որ 7 գյուղի բնակիչներն էլ կարտագաղթեն:

Սոցիալոգիկների արդյունքում պարզվեց, որ բացառությամբ մի քանի համայնքների մեծ մասը դեմ էին ՀԷԿ-երի կառուցմանը:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):